ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ «ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԱՑ» ԽՈՐԱԳՐՈՎ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ (ԺԲ.-ԺԴ., ԺԷ., ԺԸ. ԴԱՐԵՐ)

Նազիկ Յովհաննիսեան

Ներածութիւն

Գրաբարի եւ միջին գրական հայերէնի բառապաշարային տարբերութիւնների գլխաւոր աղբիւրները, ինչպէս իրաւացիօրէն նկատուել է, նաեւ բառային նորաբանութիւններն են[1]: «Հանդէս Բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները հետազօտողները հաւաստել են, որ դրանց «մանրազնին ուսումնասիրութիւնը ի յայտ կը բերի բաւական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականութեան ու ժողովրդական խօսուածքի մէջ[2]: Արձանագրուել է, որ այդպիսի բառեր գործածուել են ժամանակի համար նորաստեղծ, այսօր մեզ անյայտ երկերում, կամ էլ դրանք կերտել են բանարուեստի ուսուցիչները, ճարտասանները եւ այլք[3]: Ըստ հետազօտողների ցանկացած ժամանակաշրջանի գրական լեզու «իր բառային կազմում ունի նաեւ նորակերտ բառեր, որոնք ուսուցողական եւ այլ նպատակներով.... պիտի որ արտացոլուած լինեն տուեալ շրջանում կազմուած բառարաններում[4]: Նշուել է նաեւ, որ միջին հայերէն գրուած բնագրերում աւելի շատ են հանդիպում նորաբնոյթ կամ նորակազմ հոմանիշ բառեր[5]: Ասուածն անվերապահօրէն վերագրելի է նաեւ հոմանիշների ԺԲ.-ԺԸ. դարերից աւանդուած ձեռագիր բառարաններին, որոնցում առկայ, բայց գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրուած բառերը կարելի է նորակազմութիւններ դիտել: Եւ քանի որ այս ձեռագիր բառարանները չունեն բնագրային վկայութիւններ, հետեւաբար փորձ է արւում այդ բառերի գոյութիւնը հաստատելու հայերէնի բառակազմութեան առանձնայատկութիւններով, հետագայում լոյս տեսած բառարաններով, հնարաւորութեան դէպքում նաեւ բնագրային օրինակներով:

Նորակազմ բառերի քննութիւն

Նորակազմ բառերը քննելիս կարեւորւում է, թէ որ դարից աւանդուած գրչագրում են դրանք վկայւում, հետեւաբար այդ բառերը ստորեւ ներկայացւում են ըստ դարերի. նախ՝ ԺԲ.-ԺԳ., ապա՝ հետագայ դարերից աւանդուած գրչագրերում վկայուողները:

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերից[6] (այսուհետեւ՝ ՄՄ) ԺԲ.-ԺԳ. դարերից աւանդուած ՄՄ թիւ 5596-ում (225բ) եւ ՄՄ թիւ 4612-ում (177ա) Գիծ. տառք *հոմանիշների բառաշարքը[7] աւարտւում է* գծաւորք *բառով:*

---

1 *Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան*, հտ. Ա., Եր., 1972, էջ 246:

2 **Գ. Գասպարեան**, *Հայ բառարանագրութեան պատմութիւն*, Եր., 1968, էջ 36: Տե՛ս նաեւ **Հ. Ամալեան**, *Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (V-XVդդ.)*, Եր., 1966, էջ 130:

3 **Հ. Ամալեան**, *Հայ միջնադարեան բառարանագրութիւնը*, Եր., 2007, էջ 80:

4 Նոյն տեղում:

5 **Ռ. Ղազարեան**, *Լեզուաբանական ուսումնասիրութիւններ*, Եր., 2010, էջ 156:

6 Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա-Բ, Եր., 1965-1970:

7 Հ. Ամալեանը «Հանդէս բանաստեղծաց՝ խորագրով ձեռագիր բառարանները քննելիս նշում է. «.... բառարանում հոմանիշներն իսկական շարք չեն կազմում, ... յիշեալ բառարանի բառախմբերում կան բազմաթիւ բառեր, որոնք հոմանիշ չեն հիմնաբառին՝, եւ դա նկատի ունենալով է ինքը

Գրաբարի տպագիր բառարանները վկայում են գծաւորութիւն *բառը՝ «գծագրութիւն յար եւ նման. տպաւորութիւն. նկարագիր»*[8], *Երեմիայ Մեղրեցին՝ «կերպարան, կամ նկարագիր, կամ նշոյլ՝ նշանակութեամբ»*[9], *Մանուէլ Զախչախեանը յաւելում է՝ «տիպ, պատկեր»*[10]: Գծաւոր-ը *յիշատակում է Մխիթար Սեբաստացին՝ նշելով՝ «ունօղ զգիծ. կամ ունօղ զգիր. կամ նկարացեալ՝ իմաստները»*[11]: *Հրաչեայ Աճառեանը* գծաւոր-ը *վկայում է «Նոր բառեր»-ի շարքում*[12]: *Ստեփան Մալխասեանցն արձանագրում է «գծեր ունեցող, գծուած՝ նշանակութիւնը»*[13], *որն էլ ամրագրում են արդի հայերէնի բառարանները: Յատկանշական է, որ այն առկայ է Մխիթարեան միաբանութեան հայրերի թարգմանած երկերում («....ամենայն բաժանման եւ ստորաբաժանման երկու եւեթ լինիցին մասունք. եւ թէ սոքա երկու երկու գնայցեն թափօրապէս. ըստ որում ինքն զտարած քանակն փոխանակ ընդ այլոց ի գիծ, ի մակերեւոյթ եւ ի հաստատուն բաժանելոյ, ասէր նախ՝ մեծութիւն է գիծ կամ գծաւոր ինչ, եւ ապա թէ գծաւոր է մակերեւոյթ կամ հաստատուն՝)*[14]: *Հետեւաբար արձանագրելի է, որ* գծաւոր *բառն առաջին անգամ վկայւում է ԺԲ.-ԺԳ. դարերից աւանդուած գրչագրերում:*

Ռուբէն Ղազարեանը, միջինհայերէնեան շրջանի համար նշելով, որ «բուն ժխտական նախածանցներից գործունը միայն ան- նախածանցն է, որը կազմում է հիմնականում ժխտական կամ բացառողական իմաստով ածականներ, մասամբ էլ՝ մակբայներ»[15], *Ներսէս Շնորհալու առակներից (հանելուկներից) քաղում է անժխտական նախածանցով կազմուած, միայն հանելուկներում վկայուող «ակնյայտ նորակազմութիւններ»*[16]:

«Հանդէս բանաստեղծաց՝ խորագրով ձեռագիր բառարաններում (այսուհետեւ՝ ՁԲ), միեւնոյն բառակազմական ձեւոյթով՝ ան- նախածանցով, կազմուած բառերով առանձնանում է Անհաս *հենաբառով ՀԲՇ-ն, որում առաջրւում են* անպարիմանալի. անիմանալի. անսահմանելի. անըմբռնելի. անպա-

---

գործածում «հոմանիշային խումբ տերմինը» (Հ. **Ամալեան**, *Հայ միջնադարեան բառարանագրութիւնը*, էջ 65): Ընդունելով Հ. Ամալեանի դիտարկումը՝ պայմանականօրէն կիրառում է հոմանիշների բառաշարք ձեւակերպումը, այսուհետեւ՝ ՀԲՇ: Պահպանում է ձեռագիր բառարանների ուղղագրութիւնը:

8 «*Նոր բառգիրք հայկազեան լեզուի*՝, Երկասիրութիւն երից վարդապետաց **Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան** (այսուհետեւ՝ ՆՀԲ), Վենետիկ, հտ. I, 1836, էջ 562: «*Առձեռն բառարան հայկազեան լեզուի*՝ (այսուհետեւ՝ ԱԲ), 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 219: (Աշխատութիւնների եւ բառարանների խորագրերը տրւում են ըստ տիտղոսաթերթերի՝ պահպանելով ուղղագրութիւնը):

9 «*Բառգիրք հայոց*» (այսուհետեւ՝ ԲՀ), Քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթութիւնները Հ. Մ. Ամալեանի, Եր., 1975, էջ 67:

10 «*Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի* **Հ. Մանուէլ վարդապետէ Զախչախեան**՝ (այսուհետեւ՝ ՁԲ), Վենետիկ, 1837, էջ 366:

11 *Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարէալ ի* **Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ** (այսուհետեւ՝ ԲՀԼ), Վենետիկ, 1749, էջ 187:

12 **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան* (այսուհետեւ՝ ՀԱԲ), հտ. Ա, Եր., 1971, էջ 556: Հարկ է թերեւս արձանագրել, որ Հ.Աճառեանը տարբերակում է նորագիւտ և նոր բառերը՝ վերջինների համար նշելով. 'Բայց յատուկ ջանք գործ դրի իւրաքանչիւր արմատի դէմ դնելու նրանից յօրինուած նորակերտ աշխարհաբար բառերը, ինչ որ անշուշտ օգտակար պիտի լինի նոր հայերէնի լիակատար բառարան կազմելու պարագային՝ (տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 8):

13 **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետեւ՝ ՄՀԲԲ), հտ. I, Եր., 1944, էջ 450:

14 *Արուեստ բանական կամ տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սուաէի*. Փոխեաց ի հայ հ. Արսէն վ. Անթիմոսեան Մխիթարեանց, Վենետիկ, 1825, էջ 300:

15 **Ռ. Ղազարեան**, Լեզուաբանական ուսումնասիրութիւններ, էջ 137:

16 **Ռ. Ղազարեան**, *Միջին հայերէնի բառապաշարը*, Եր., 1993, էջ 25:

րունակ/ելի. անայլանուն. անպարագրելի. աներեւելի. անբաւելի. անճառելի. անբովանդակելի. անհասանելի. անտանելի. անայլայլելի. աներեւելի. անբաւելի. անճառելի *եւ աւելի քան 35 այլ բառեր*[17]: *Այս առնչութեամբ յիշատակելի է Հրաչեայ Աճառեանի այն դիտարկումը, որ «մեսրոպեան հայերէնը չգիտէ մի խումբ բառեր, որոնք սովորական են յետին հայերէնի մէջ»: Նա առանձնացնում է նաեւ «անմասնիկով կազմուած բացասական բառերը՝, որոնք «չեն կարող իրենց վերջում կրել* -ելի *մասնիկը», եւ որպէս «յետին» թուարկում* անշարժելի, անայլայլելի, անխախտելի, անասանելի *բառերը*[18]: *Վարագ Առաքելեանը, անդրադառնալով Հրաչեայ Աճառեանի՝ «Վիեննայի մխիթարեանների նկատած զանազանութիւնները» ընդհանրացնելուն, Աստուածաշնչից, Խորենացու, Եղիշէի, Եզնիկի, Փարպեցու, Բուզանդի, Բարսեղ Կեսարացու երկերից առանձնացնում է մասնաւորապէս վերոնշեալ դիտարկմանն առնչուող այդպիսի բառեր՝ «դիտողութեան կարգով՝ նշելով, որ «այդ կարգի կազմութիւնները սկզբնապէս սակաւ են, բայց, այնուամենայնիւ, կան, եւ դրանց հետեւութեամբ յետագայ գրողները յաճախել են դրանք»*[19]: *Գոհար Մուրադեանը* անհասանելի, անճառելի, անսահմանելի, անքննելի *եւ «ժխտական մասնիկով ու «լի» վերջածանցով՝ այլ «բայածականներ» դասական հայերէնում դիտում է յունաբանութիւններ*[20]:

ԺԴ դարից աւանդուած ՄՄ թիւ 2371 (282ա), 3937 (55բ), 4149 (351բ), 8198 (56բ, 64ա)-ում[21] *վերոնշեալ ՀԲՇ-ում, առկայ է անայլայլելի բառի առադրութեամբ վկայուող՝ ան- նախածանցով եւ այլանուն բառով բաղադրուած* անայլանուն *կազմութիւնը*[22]: Այլանուն-*ը վկայում են Գուիտոն Լուսինեանը՝ դրանով մեկնելով Hétéronyme-ը*[23], *Ստեփան Մալխասեանցը՝ «ուրիշի կամ այլ անուն, որով մեկը հրատարակում է իւր գրուածքը. կեղծանուն՝ նշանակութեամբ եւ «հազուադէպ բառ՝ նշումով (ՄՀԲԲ, հտ. I, էջ 77), Աշոտ Սուքիասեանը՝ «Տարանուն՝ բացատրութեամբ*[24]: *Ուստի սոյն բաղադրութեան՝ բառարաններում արձանագրուած լինելը հնարաւորութիւն է ընձեռում*

17 *Անհաս* հենաբառով ՀԲԾ-ն ապրտւում է «....*եւ զառ ի յորոց յոչ զինչէն: այլ զոր ինչ ոչն է նշանակէ: եւ այլեւս սոցին նման: Եւ ահա աստուած, ի վեր քան զբան և զփորձ և զբառն և զմիտս և զսահման և զհասս. վերագոյն քննեցեալ.... և որ այլևս զկնի սոցունց և նման. և ահա աստուած»* նկարագրութեամբ (ընդգծ. Ն.Հ.), որն էլ ակնյայտօրէն հաւաստում է Անհաս→Աստուած իմաստային անցումը: «.... որ է աստուած» արտահայտութեամբ ավարտւում է նաև Լոյս հենաբառով ՀԲԾ-ն. ինչպես իրաւացիօրեն նշում է Վ. Ղազարեանը, «միջնադարեան հայ եւ լատին գրականութեան մէջ լոյսի բազմախորհուրդ բառային գործածութիւնները (claritas, splendor, resplendentia fulgar, lux, lumen, illumino, lucidus, illustro) եղել են սովորական: Նարեկացու տաղերում Քրիստոսը դիտուել է «արեգակ, լոյս, ճառագայթ, հուր եւ այլն» (**Վ. Ղազարեան,** *Սարգիս Պիծակ*, Եր., 1980, էջ 15):

18 **Հ. Աճառեան,** *Հայոց լեզուի պատմութիւն,* II Մաս, Եր., 1951, էջ 86-87:

19 **Վ. Առաքելեան,** *Ակնարկներ հայոց գրական լեզուի պատմութեան (V դար)*, Եր., 1981, էջք 92-93, 98-99:

20 **Գ. Մուրադեան,** *Յունաբանութիւնները դասական հայերէնում*, Եր., 2010, էջ 85-86:

21 Գրչագրերի համեմատութիւնից նկատելի է, որ թէեւ ՄՄ թիւ 4149-ը *Անհաս* հենաբառով ՀԲԾ-ով եւ բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ ձեռագիր բառարան է, բայց այդ հենաբառով եւ *Ապարանք* ու *Աստուածազան* հենաբառերով ՀԲԾ-ներով՝ յետագայ դարերից աւանդուած, բառերի կոպիտ այբբենական դասաւորութեամբ գրչագրերում *անայլանուն* բառը չի վկայւում:

22 Հարկ է նշել, որ այն նախ վկայում են ԺԲ.-ԺԳ. դարերից աւանդուած ՄՄ թիւ 5596 (221ա), 4612 (173բ)-ը, որոնցում, սակայն, չկայ *անայլայլելի* բառը:

23 **Գուիտոն Լուսինեան,** *Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ*, հտ. I, A-H, Փարիզ, 1900, էջ 1033:

24 **Ա. Սուքիասեան,** *Հայոց լեզուի հոմանիշների բառարան* (այսուհետեւ՝ ՀԼՀԲ), Եր., 1967, էջ 34:

ընդունելու նաեւ «այլ անուն չունեցող՝ իմաստով, ժխտական ան- նախածանով անայլանուն կազմութեան գոյութիւնը, որով գրչագրերում բնութագրւում է Աստուած:

Կարելի է նաեւ ընդունելի համարել, որ անայլանուն-*ը* անայլայլուն *բառի սխալ գրութիւնն է. վերջինը վկայում են Մխիթար Սեբաստացին՝ «անայլայլելի. կամ անփոփոխ՝ (ԲՀԼ, էջ 35 (64)), «չըփոխուող, չըփոփոխուող՝ իմաստով*[25]*, Ստեփան Մալխասեանցը՝ «Տ. Անայլայլելի՝ և «Հազուագէպ բառ կամ նշանակութիւն՝ (ՄՀԲԲ, հտ. I, էջ 87), այլեւ ՀԼՀԲ-ն՝ «տե՛ս Անայլայլ՝ նշումներով (էջ 37): Գրաբարի բառարանները վկայում են անայլայլուկ-ը՝ յղելով՝ «Տ. Անյեղյեղուկ՝ (ՆՀԲ, հտ. I, էջ 106: ԱԲ, էջ 41):*

Նմանատիպ կազմութիւն է ԺԸ. դարից աւանդուած ՄՄ թիւ 566 (II)-ում[26] *նոյն ՀԲՇ-ում (280ա), առկայ* անայլահաւատ-*ը: Բառարաններում այլահաւատ-ի՝ հայ մատենագրութեան մէջ վկայուող «ուրիշ հաւատքի տէր՝ (ԲՀԼՄՄ, էջ 17 (630)), «որ է յօտար կրօնից կամ ի հաւատոց՝ (ՆՀԲ, հտ. I, էջ 86: ԱԲ, էջ 34), «ունօղ զօտար կամ զմոլար հաւատս՝ (ՋԲ, էջ 53), «Տ. Այլակրօն՝ (ՄՀԲԲ, հտ. I, էջ 77) նշանակութիւններն են*[27]*, որոնց օգնութեամբ էլ անայլահաւատ-ը կարելի է մեկնել որպէս «ուրիշ հաւատք չունեցող՝. նշանակութիւն, որով դարձեալ գրչագրերում բնութագրւում է Աստուած:*

ՄՄ թիւ 4149-ում՝ Ռահ. ճանապարհ. շաւիղ. պողոտայ. կուտ. բազմակոխ. շառաւիղ *ՀԲՇ-ում (361բ-362ա), վկայուող* յոգնընթաց *բաղադրութեան առաջին բաղադրիչի՝* յոգն *«շատ, բազում՝ արմատի համար Հրաչեայ Աճառեանը նշում է, որ «սրանից ունինք կազմուած բազմաթիւ ածանցներ (ԱԲ ունի 135 հատ), որոնք սովորաբար յետին են՝ «հնագոյններ՝-ից վկայելով չորսը (յոգնագոյն, յոգնագնալի, յոգնաճարակ, յոգնաշնորհ) (ՀԱԲ, հտ. Գ, էջ 402): Վերջին ընթաց բաղադրիչը նոյնպէս հայերէնում գործուն է. «Հայոց լեզուի յանգաբառարան՝-ում առկայ են բազմաթիւ կազմութիւններ*[28]*: Հետեւաբար ընդունելի է հայոց լեզուի բառարաններում չարձանագրուած «շատ շարժում ունեցող, բանուկ» նշանակութեամբ սոյն նորակազմութիւնը:*

Նոյն գրչագրում՝ Վտանգ *հենաբառով ՀԲՇ-ում (362բ),* խոշոշել *եւ* առոգել *բայերին հաւելուած* սրտաթափել *բայը վկայում է միայն Մխիթար Սեբաստացին՝* Վախցնել *բառայօդուածում առաջարկելով նաեւ* սրտաբեկել, սրտաբեկ առնել, սրտաթափ առնել *բայերը (ԲՀԼՄՄ, էջ 598 (1627)): Վերջին յարաբերական կազմութիւնը քաղւում է Եղիշէի երկից՝ որպէս նորայայտ բառ*[29]*: Յատկանշական է, որ ԺԷ. դարից աւանդուած ՄՄ թիւ 5925-ում (100բ)* սրտաթափանք *բառն է: Գրաբարի բառարանները նշում են* սրտաթափ *եւ* սրտաթափումն *բառերը, որոնք վկայում են նաեւ ՄՀԲԲ-ն (հտ. IV, էջ 280), ԺՀԼԲԲ-ն (հտ. IV, էջ 345), ԱՀԲԲ-ն (էջ 1342):*

ԺԷ. դարից աւանդուած ՄՄ թիւ 3170-ում՝ Հոյակապ հենաբառով ՀԲՇ-ում (172բ-173ա), առկայ է հոծախիտ բառը: Այն վկայւում է գերմանացի փիլիսոփայ, աստուածաբան Ալբերտ Մեծի երկի «ի մեծամեծաց

25 «*Բառգիրք հայկազեան լեզուի*», Արարեալ բազմատքուն, եւ աչալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տէառն **Մխիթարայ մեծի աբբայի, եւ բարեբնպետին Սեբաստացւոյ** (այսուհետեւ՝ ԲՀԼՄՄ), հտ. II, Վենետիկ, 1769, էջ 20 (633):

26 ՄՄ թիւ 566-ում առկայ է 2 բառարան՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառից՝ (էջ 234 բ-279 ա) եւ «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ՝ (էջ 278 բ- 300 ա), ուստի 2-րդը նշւում է ՄՄՋ 566 (II):

27 Այս իմաստներն արձանագրում են նաեւ արդի հայերէնի բառարանները:

28 Տե՛ս «*Հայոց լեզուի յանգաբառարան*», Եր., 1976, էջ 581-58: Տե՛ս նաեւ՝ ՀԱԲ, հտ. Բ, էջ 125-126:

29 **Ռ. Դազարեան, Հ. Աւետիսեան,** *Նորայայտ բառեր գրաբարում*, Եր., 2007, էջ 94:

վարդապետաց մերոց» հայերէն թարգմանութեան մէջ («....գոյն ըստ որում է ի հոծախիտ մարմինսն»)[30]: Բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին «հոծ եւ խիտ, սաստիկ խտտացեալ՝ նշանակութեամբ (ԲՀԼ, էջ 545 (590)), այլեւ Լեփ լեցուն *բառայօդուածում* ամենալից, գերահոծ *եւ այլ բառերի առաջրմամբ (ԲՀԼՍՄ, էջ 226 (1255)): Ստեփան Մալխասեանցը, յիշատակելով նոյն իմաստով, այն համարում է «հազուադէպ բառ՝ (ՄՀԲԲ, հտ. III, էջ 125): Յատկանշական է, որ թէեւ այս բառը վկայակոչւում է համացանցում («Մաղիկները հաւաքուած են ծաղկափթթութեան մէջ, որոնք տարբեր աստիճանի հոծախիտ ողկոյզներ կամ հուրաններ են)[31], սակայն առկայ է միայն Յովհաննէս Բարսեղեանի կազմած բառարանում[32]:*

Մանկայտես *բաղադրութիւնն է նոյն դարից աւանդուած ՄՄ թիւ 516-ում՝* Համբակ. կացի. պարմանի. մանկայկերպ. արբուն. մանկութիւն. հասակ. յաստիս *ՀԲՇ-ում (107բ): Այն արձանագրում է «Հայոց լեզուի հոմանիշների բացատրական բառարան-ը՝ յղելով «երեխայադէմ .... (մանկական դէմք ունեցող)՝ բացատրութեամբ* Մանկադէմ-*ը[33]:* Մանկատես-*ը վկայւում է Զարենցի անտիպ* [illegible] *փաստական նիւթի հիման վրա» գրուած ատենախօսութեան մէջ («Գծային հեքիաթում թզուկները անանուն, մանկատես տղամարդիկ են, որոնք զբաղւում են հանքափորի մրոտ աշխատանքով»)[34], մամուլում («Ոչ միայն մանկատես էր, այլեւ մանկամիտ»)[35]:*

ՄՄ թիւ 566 (II)-ում՝ Պատրուակեալ. քողասուզեալ. ծածկեալ. խորամանգեալ. սուտ դիմաւք. խորախորհուրդ. պատենաւոր. խորհրդաւոր. քօղաբորբեալ. առագաստեալ. աներեւակի. ի դարանի. գաղտնի. որջասուզեալ. ընդ քունով. ընդ գրուանաւ. արուեստիւ պատուեալ *ՀԲՇ-ն (293բ) եզրափակւում է* զանխլակի *բառով: ԺԲ.-ԺԳ. եւ յետագայ դարերից աւանդուած գրչագրերում* Զանխուլ *հենաբառն է: Գրաբարի բառարաններն արձանագրում են* զանխլաբար, զանխլանամ, զանխլանք, զանխլութիւն, զանխուլ *բառերը (ՆՀԲ, հտ. I, էջ 713-714: ԱԲ, էջ 286): Մխիթար Սեբաստացին* զանխլակի-*ն յիշատակում է* Զանուձուն *չհանելով բառայօդուածում՝ առաջրելով* անբարբառ. անմոունչ. անշշունչ. լռելեան. լռելեայն. զանխուլ. զանխլաբար. գաղտագողի. առանց ոտնաձայնի *բառերը (ԲՀԼՍՄ, էջ 372 (1401)): Միեւնոյն բառայօդուածը եւ համարեա նոյն բառաշարքն է վկայում Էդուարդ Հիւրմիւզեանը[36]:* Զանխլակի-*ն՝ «զանխուլ կերպով, ծածկաբար, լռելեայն՝ իմաստով եւ «հազուադէպ բառ՝ նշումով, վկայում են Ստեփան Մալխասեանցը (ՄՀԲԲ, հտ. II, էջ 8), «Հայոց լեզուի նոր բառարան-ը՝ յաւելելով՝ «գաղտնօրէն, գաղտնաբար՝[37]: Ղեւոնդ Ալիշանը* զանխլակի-*ն գործածում է իր աշխատասիրութիւններում («զանխլակի խոյս տուեալ՝, «սորա իրագեկ լեալ,*

30 *Համառօտութիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալբերտին*, Թարգմանեցեալ ի վաղնջուց ժամանակաց, ի մեծամեծաց վարդապետաց մերոց, ի լատին լեզուէ ի հայ բարբառ, Վենետիկ, 1715-1716, էջ 88:

31 https://khachatureghoyan.wordpress.com/category/%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/page/2/

32 **Հ. Բարսեղեան**, *Հայերէն ուղղագրական-ուղղախօսական-տերմինաբանական բառարան*, Եր., 1973, էջ 588:

33 **Ա. Սուքիասեան**, *Հայոց լեզուի հոմանիշների բացատրական բառարան*, Եր., 2009, էջ 728:

34 councils.ysu.am/pdf_files/009/2017/009-Armine_Danielyan.pdf

35 https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azg91/2010/28_ocr.pdf

36 **Եդ. Հիւրմիւզեան**, *Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբար հանդերձ յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց*, Վենետիկ, 1869, էջ 572:

37 *Հայոց լեզուի նոր բառարան*, Աշխատասիրեցին՝ Գ. Ճէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հտ. I, Պէյրութ, 1992, էջ 597:

զանխլակի ծանուցմամբ իշխանուհւոյն, «զօր եւ ծանոյց զանխլակի[38], *«համառօտս իմն բովանդակեալ զամենայն ծանուցանէ զանխլակի*[39]:

Նախաիշխան-ը *առկայ է միայն ՄՄ - թիւ 556(II)-ում՝* Գահերէց. նախադաս. նախագահ. նախամեծար. նախկին. առաջին. առաջնակարգ *ՀԲՇ-ում (282բ): Հրաչեայ Աճառեանի հաւաստմամբ «առաջ, առաջուց. 2. գլխաւոր, հինը, առաջինը՝ նշանակութիւններով* նախ-*ից «ածանցուած են բազմաթիւ բառեր (ԱԲ ունի 409 ձեւ), որոնց մեծագոյն մասը յետին է՝ (ՀԱԲ, հտ. Գ, էջ 419): Յատկանշական է, որ Նորայր Բիւզանդացին նախ արմատով բաղադրուած շուրջ 25 բառ է արձանագրում ԺԱ.-ԺԷ. դարերի մատենագրութիւնից յիշատակելով* նախահաւատ, նախամեղ, նախապապ, նախամամ, նախապետ *եւ այլ բառեր*[40]: Նախ *եւ* իշխան *արմատներով բաղադրուած* նախաիշխան *կազմութեանը վերագրելի է «իշխաններից առաջինը, գլխաւորը՝ նշանակութիւնը:*

Նոյն ՀԲՇ-ում վկայուող առաջնակարգ *բառը գրաբարի բառարանները չեն վկայում. այն կարելի է բառային տարաժամանակեայ տարբերակ դիտել՝ առադրելի գրաբարի բառարաններում «Յառաջագոյն կարգեալ. եւ Առաջին կարգաւ՝ (ՆՀԲ, հտ. II, էջ 334), «1. առաջուց կարգաւորած. 2. կարգով առաջ՝ (ԱԲ, էջ 585) իմաստներով առկայ* յառաջակարգ-*ին:* Առաջնակարգ-ն *արձանագրում են հայոց լեզուի բառարանները՝ «բարձրորակ, առաջին կարգի, առաջին տեսակի, ընտիր, լաւագոյն, առաջաւոր, առաջնահերթ, խիստ կարեւոր՝ իմաստներով (ՄՀԲԲ, հտ. I, էջ 220: ԺՀԼԲԲ, հտ. I, էջ 174-175: ԱՀԲԲ, էջ 104)*[41] :

ԺԸ. դարից աւանդուած ՄՄ թիւ 9992-ում՝ Բնութիւն. անտառախիտ. բազմաշաւիղ. ծառնոց. ծաղկոց. դրախտ. տփուտ. մացառ. մայրի. խոռ վայրք *ՀԲՇ-ում (4բ), առանձնանում է* տերեւափթիթ *բառը*[42], *որն արձանագրում է Մխիթար Սեբաստացին «տե՛ս զտերեւազարդ յղումով (ԲՀԼ, էջ 1118 (1177): ԲՀԼՄՍ, էջ 388 (1001)), այլեւ յիշատակում «Տերեւներով զարդարուած կամ զարդարուող՝ բառայօդուածում (ԲՀԼՄՍ, էջ 627(1656)): Բառն առկայ է նաեւ Մխիթար Սեբաստացու եւ Գրիգոր Փէշտըմալճեանի կազմած բառարաններում՝* Գրնակ *բառայօդուածում («է թուփ ինչ բազմաճիւղ. որոյ չիւղքն են իբր թզաչափ տերեւափթիթ...՝)*[43]. *Այն գործածում են նաեւ Մխիթարեան միաբանութեան հայրերը («Տերեւափթիթ որթ ուռազարդ յոլորապտոյտ պարունակ Ողջագուրեալ երկնաբերձ բունէ վերաթեւէ բարունակ՝)*[44], *«Արձագանք՝ գրականական եւ քաղաքական պատկերազարդ շաբաթաթերթը (ԺԹ. դ.)*[45]:

Այսպիսով՝ քննութեամբ պարզւում է, որ «Հանդէս բանաստեղծաց՝ խորագրով ձե-

38 Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան. *Սիսուան համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ»*, Վենետիկ, 1885, էջք 52, 426, 508:

39 Հ. Ղևոնդ Վ. Ալիշան, *Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան*, Վենետիկ, 1904, էջ 243:

40 Նորայր Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ.-ԺԷ. դարուց*, Ժնեւ, 2000, էջ 548-549:

41 *Հայոց լեզուի նոր բառարան*, Աշխատասիրեցին Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ.Կ. Տօնիկեան, Պէյրութ, 1968, էջ 32: *«Հայոց լեզուի նոր բառարան»*, հտ. I, էջ 180:

42 Յատկանշական է, որ ԺԴ. դարից աւանդուած ՄՄ թիւ 4149-ում *սաղարթափթիթ* բառն է:

43 ԲՀԼՄՍ, էջ 113 (136): *Բառգիրք Հայկազեան լեզուի* որ է երկասիրութիւն Փեշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի», հտ. I, Կ.Պոլիս, 1844, էջ 260:

44 *Տաղք Մխիթարեան վարդապետաց*, հատոր առաջին, Վենետիկ, 1852, էջ 172:

45 «.... մի՛թէ միևնոյն տպաւորութիւնն ենք թողնում .... ազատ բնութեան մէջ բուսած աճագին տերևափթիթ և ծաղկազարդ ծառի ճիւղի վերայ հանգստացող արտոյտի դիտողութիւնն և.... սեղանի վերայ դրուած, խոտով լցրած, չորացած և մի փայտի կտորի վերայ ամրացրած արտոյտն». https://tert.nla.am/archive/NLA %20 TERT/Ardzaganq/1890/1890(14)_ocr.pdf

ռագիր բառարաններում վկայուող վերոնշեալ նորակազմ բառերը, ինչպէս նկատել են հետազօտողները, ամենայն հաւանականութեամբ, գործածել են ժամանակակիցները. դրանք առկայ են Մխիթար Սեբաստացու (ԺԸ. դ.) կազմած բառարանում, Մխիթարեան հայրերի (ԺԹ. դ.) աշխատասիրութիւններում. ըստ բառարանների՝ մի քանիսը պահպանուել են հայոց լեզուի արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակներում:

Օգտագործուած գրականութիւն

Ալիշան Ղ., Հայաստան յառաջ քան գլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:

Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հտ. Ա, Եր., 1972:

Աճառեան Հ., Հայոց լեզվի պատմութիւն, II Մաս, Եր., 1951:

Ամալեան Հ., Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (V-XV դդ.), Եր., 1966:

Ամալեան Հ., Հայ միջնադարեան բառարանագրութիւնը, Եր., 2007:

Առաքելեան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզուի պատմութեան (V դար), Եր., 1981:

Արուեստ բանական կամ տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սուաւէի. Փոխեաց ի հայ Հ. Արսէն վ. Անթիմոսեան Մխիթարեանց, Վենետիկ, 1825:

Գասպարեան Գ., Հայ բառարանագրութեան պատմութիւն, Եր., 1968:

Համառօտութիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալբերտին, Թարգմանեցեալ ի վաղնջուց ժամանակաց, ի մեծամեծաց վարդապետաց մերոց, ի լատին լեզուէ ի հայ բարբառ, Վէնէտիկ, 1715-1716:

Ղազարեան Ռ., Լեզուաբանական ուսումնասիրութիւններ, Եր., 2010:

Ղազարեան Ռ., Միջին հայերէնի բառապաշարը, Եր., 1993:

Ղազարեան Վ., Սարգիս Պիծակ, Եր., 1980:

Մուրադեան Գ., Յունաբանութիւնները դասական հայերէնում, Եր., 2010:

Սիսուան համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ, Հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. մ. Ալիշան, Վենետիկ, 1885:

Տաղք Մխիթարեան վարդապետաց, հտ. I, Վենետիկ, 1852:

Բառարաններ

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հտ. Ա, Բ, Գ, Եր., 1971, 1973, 1977:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, 1865:

Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Զախջախեան, Վենետիկ, 1837:

Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացւոյ, Վէնէտիկ, 1749:

Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի, հտ. I, Կ.-Պոլիս, 1844:

Բառգիրք հայկազեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աչալուրջ ճգանօք յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, և բարեւնապետին սեբաստացւոյ, Վէնէտիկ, 1769:

Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթությունները Հ. Մ. Ամալեանի, Եր., 1975:

Բարսեղեան Հ., Հայերէն ուղղագրական-ուղղախօսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973:

Բիւզանդացի Ն., Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժնեւ, 2000:

Լուսինեան Գ., Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հտ. I, A-H, Փարիզ, 1900:

Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Գ. Ճէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հտ. I, Պէյրութ, 1992:

Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ.Կ. Տօնիկեան, Պէյրութ, 1968, էջ 32:

Հայոց լեզուի հանգաբառարան, Եր., 1976:

Հիւրմիւզեան Եդ., Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ հանդերձ յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց, Վենետիկ, 1869:

Ղազարեան Ռ., Աւետիսեան Հ., Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հտ. I, Եր., 1944:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան, Վենետիկ, հտ. I, 1836:

Սուքիասեան Ա., Հայոց լեզուի հոմանիշների բառարան, Եր., 1967:

Սուքիասեան Ա., Հայոց լեզուի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009:

Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերի ցուցակներ և ձեռագրեր

Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա-Բ, Եր., 1965-1970:

ՄՄ թիւ 516, 566 (II), 2371, 3170, 3937, 4149, 4612, 5596, 8198, 9992 .

Էլեկտրոնային կայքեր և յղումներ

https://khachatureghoyan.wordpress.com/category/%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/page/2/

https://hy.wikisource.org/wiki/%D4%B1%D5%B6%D5%BF%D5%AB%D5%BA_(%D5%89%D5%A1%D6%80%D5%A5%D5%B6%D6%81)

councils.ysu.am/pdf_files/009/2017/009-Armine_Danielyan.pdf

https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azg91/2010/28_ocr.pdf

https://tert.nla.am/archive/NLA %20 TERT/Ardzaganq/